

IV ՆԱՄԱԿՆԵՐ

Դուրեանը թողել է երեք կարգի գրուածքներ՝ նամակներ, թատերգութիւններ եւ բանաստեղծութիւններ: Այդ բոլորը մի հատորի մէջ ամփոփուած լոյս են տեսել 1893 թուին Պոլսում, իսկ ընդարձակ կենսագրութիւնը հրատարակուել է նոյն թուին եւ նոյն տեղը: Այդ երկու գիրքն էլ լոյս է ընծայել Դուրեանի կենսագիր Բարսեղ Էքսէրճեանը:

Այնուհետեւ Դուրեանի բանաստեղծութիւնները լոյս տեսան Բագում, իսկ վերջերս Վիեննայում: Ես ձեռքս տակ ունեցել եմ այդ բոլոր հրատարակութիւնները, ինչպէս եւ Դուրեանի մասին եղած գրականութիւնը: Որոշ չափով օգտուել եմ Սիմէոն Յակոբեանի, Արշակ Զօպանեանի, Ալեքսանդր Ռուբէնու եւ Էքսէրճեանի աշխատութիւններից, որոնք վերաբերում են Դուրեանին: Ի նկատի եմ ունեցել նմանապէս Լ. Մանուէլեանի, Վրթ. Փափաղեանի եւ Հր. Աճառեանի գրականութեան պատմութիւնների մէջ եղածները մեր ազգային բանաստեղծի մասին:

Պետրոս Դուրեանը թողել է 13 նամակ, որոնցից մէկը գրուած է շատ պարզ եւ գեղեցիկ գրաբարով, իսկ միւսները գրուած են աշխարհաբար, որոնց լեզուն բանաստեղծական է, միանգամայն հասկանալի եւ գեղարուեստական: Համարձակ կարելի է ասել, որ դրանք արձակ բանաստեղծութիւններ են եւ իրենց գրաւորութիւնը տակաւին չեն կորցրել: Այդ նամակների մէջ արտացոլում է նոյն ինքը Դուրեանը՝ իր բովանդակ կեանքով, հոգով եւ փրկիսփայլութեամբ:

Մի անգուղական եւ գրաւիչ համարձակութեամբ անընդուն պատանին փրկիսփայլում է աշխարհի, կեանքի, մարդու հանճարի եւ անհունի մասին: Դրանք այնպիսի անիծում եւ կնճառ հարցեր են, որոնց վրայ գլուխ են ճաքեցրել մարդկութեան լաւագոյն մտածողները եւ հակասական եզրակացութիւնների են յանգել: Չպիտի սպասենք ի հարկէ, որ մեր պատանի Դուրեանը լուծած լինի այդ բարդ խնդիրներից ո՛րեւէ մէկը գիտական ըմբռնողութեամբ: Սակայն, ազատօրէն կ'ասեմ, որ նա ապրել է խորապէս կեանքի դառն փրկիսփայլ-

յութիւնը, հետեւապէս եւ հետաքրքրական են նրա իւրայատուկ դատողութիւններն այդ բնագաւառում, մանաւանդ որ այդ խնդիրներից շատերը կազմել են նրա անմահ բանաստեղծութիւնների նիւթն ու առանցքը:

Կեանքից կրած իր բոլոր դառնութիւնները, իր ընտանեկան-տնտեսական մղձաւանջը, իր հիւանդութեան եւ անփոխադարձ կամ կորցրած սիրոյ ողբերգութիւնը, իր անյաջող դորձնական քայլերը, անյաբուրդ եւ չբաւարարուած ու կեանքի ծարաւ իր հոգեկան ներքին ապրումները դուրս են բերուած նամակների մէջ եւ մեծապէս նպաստել են նրա կենսագրութիւնը գրողին: Այդ նամակները ուղղուած են Խորէն արքեպիսկոպոս Նարպէյին, Մատթէոս արք. Իզմիրլեանին, Յովհաննէս Էֆէնտի ձանՖէսճեանին եւ Տիգրան Էֆ. Աղամեանին:

Աշխարհի մասին մեր մտղաչ բանաստեղծն ասում է.

«Միշտ ձանձրալի է այժմեան աշխարհն անոր համար, որ ուղեղին մէջ գաւ մը չունի»:

Դանդաղաբար իր դառն վիճակից եւ գլխաւոր իր կոչումը, Դուրեանը շեշտում է, որ ինքը «նախօին վրայ սեւ ամպ մը ունի. հիւսիս մը հառաչն է այն, հո'ն, ուր վառարանն ամառի է եւ սիրտը կը մխայ, հոն, ուր կեանքը կը լո՛ւ եւ քնարը կը հեծկլտայ»:

Դուշակելով որ ինքը վաղաժամ պիտի մեռնի եւ իր տենչերն ու իղձերն անկատար պիտի մնան, դառնութեամբ խոստովանում է.

«Հասարակաց գերեզմանոցներուն մէջ հողակոյտեր կան, որոնք հրաբուխներ պիտի ըլլային, բայց կայծը սրտի քանձը խաւարի մէջ առանց երբեք հրահրելու քաղուած է»...

Իր սիրելի ընկեր Վարդան Լուսինեանի ողբերգական մահը սղալով եւ նրա գերեզմանի վրայ մի տաղանդաւոր եւ սրտաշարժ դամբանական արտասանելով, մի սգաւոր բարեկամի գրած նամակում էլ այդ մահուն անթիւ յայտնում է հետեւեալ կարծիքը.—

«Աշխարհը Աստուծոյ ձանձրոյթի մէկ հառաչն ըլլալու է կամ դժոխոց մէկ անհամ կատակը»:

Մի նամակում էլ նկարագրելով իր թուրքաւոր, բերնից արիւն հոսելը, հիւժուելը, ա-